# ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ՝ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

*Սեպտեմբերի 15-ին, Վրաստանի դպրոցներում մեկնարկում է 2023-2024 ուսումնական տարին, իսկ բուհերում այն կսկսվի սեպտեմբերի 20-ից հետո, տարբեր օրերի՝ Իվ.Ջավախիշվիլու համալսարանում՝ 18-ին, Իլիայի համալսարանում՝ 25-ին եւ այդպես հաջորդաբար մյուս բարձրագույն բուհերում: Մեկնարկի պահից մեր ողջ երկիրը սկսում է ապրել առանձնահատուկ ռիթմով: Օրը հատկապես հիշելի ու բացառիկ է նրանց համար, ովքեր առաջին քայլերն են անում դեպի դպրոց, դեպի գիտելիքի նոր ու զարմանահրաշ աշխարհը:*

*Մեր երկրի համար կարեւոր է կրթության համընդհանուր մակարդակի բարձրացումը, ինչի ապահովմանն են ուղղված Վրաստանի կրթության նախարարության կրթական բարեփոխումները:*

*Նոր ուստարին Վրաստանի կրթական հաստատություններում մեկնարկում է հանրային կրթության նոր չափորոշիչների ներդրմամբ, բարի սպասումներով, հույսերով, որ այն կլուծի հնարավոր մարտահրավերները:*

*Շնորհավորում ենք կրթության գործի պատասխանատուներին, դասախոսներին , մանկավարժներին, մեր երկրի ուսանողներին, աշակերտությանը: Կրթության մշակներին մաղթում ենք առատ արդյունքներ ու բարի վաստակ, իսկ դպրոցականներին՝ սեր դեպի ուսումը եւ՝ պատասխանատվության գիտակցում ուսման ձեռքբերման ճանապարհին:*

## ԹԲԻԼԻՍԻԻ ԹԻՎ 104 ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ

Ուսումնառության սկիզբը առանձնակի պարտավորեցնող է բոլորիս համար: Կոնկրետ մեր՝ Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցը ծրագրել է նոր ավանդույթների ներդրում՝ նպատակ ունենալով ուսման պրոցեսը ապահովել ժամանակակից կրթական ծեւաչափերին համապատասխան որակով: Առայժմ չենք ուզում բարձրաձայնել պատրաստած անակնկալների մասին...

Այս տարվա մեր առաջին դասարանում առայժմ գրանցված է 19-ը աշակերտ, հուսով ենք, որ առաջիկայում կունենանք նոր գրանցումներ: Ուրախ ենք, որ մեր 22 շրջանավարտից 14-ն ընդունվել են բուհեր, որոնցից 5-ը ստանալու են պետական 100 տոկոսանոց դրամաշնորհ (գրանտ): Մեկ անուն էլ ունենք հիշատակման արժանի: Մեր Մենուա Ավագյանը (9-րդ դաս.) «Իմ առաջին համակարգիչը» նախագծում կստանա մրցանակային համակարգիչ, որին արժանացել է՝ 7-8-9-րդ դասարանները բարձր գնահատականներով փակելու համար:

Կուզենայի խոսել բոլորիս մտահոգող խնդիրների մասին: Եթե ոչ այս տարի, ապա ապագայում կոնկրետ մենք, հավանաբար, նաեւ մյուս հայկական դպրոցները, կունենանք որոշ առարկաների մասնագետների պակաս: Եկեք գտնենք համընդհանուր խնդրի լուծման ուղիներ՝ այսօրվանից սկսենք պատրաստել մեր ապագա մասնագետներին: Ապա՝ սիրելի հայրիկներ ու մայրիկներ, մի' զլացեք ձեր երեխաներին բերել հայկական դպրոց: Դրանով նա ձեռք կբերի՝ պետական «1+4» ծրագրից օգտվելու, միաժամանակ 4՝ հայերեն, վրացերեն, ռուսերեն, օտար լեզուներ տիրապետելու առավելություն: Ասել է՝ կունենա ապահովված ապագա: Եվ մայրական ուղերձս մեր երեխաներին՝ բարձրագույն կրթություն կամ որեւէ արհեստ սովորելով՝ կարող եք դառնալ արհեստավարժ բժիշկ, ճարտարապետ, մանկավարժ, կոշկակար, դերձակ, բայց եթե մարդ հոգում Աստված չունենա, չի կարող իրեն երջանիկ ու բավարարված զգալ: Անխափան առաջընթաց ձեր ընտրած ճանապարհներին:



*ԻՐԻՆԱ ԺԱՄԿՈՉՅԱՆ*
*Դպրոցի տնօրեն*

## ԱԽԱԼՑԻԽԵԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ԾՂԱԼԹԲԻԼԱ ԳՅՈՒՂԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ

Ծղալթբիլա գյուղի մեր հանրային դպրոցը, նոր ուսումնական տարում, կկարողանա հաղթահարել ժամանակի մարտահրավերները: Դրա համար դպրոցն ունի անհրաժեշտ բոլոր նախադրյալները. ուստարին դիմավորում ենք 112 աշակերտով, 8 հոգանոց առաջին դասարանով, որի հավելման հավանականությունը դեռ կա, իրենց գործը սիրող, նվիրյալ ուսուցիչներով եւ ուսման ծարավի աշակերտներով...

Ուրախությամբ նշենք, որ 2022-2023 ուստարվա շրջանավարտներ Սրբուհի Դուրգարյանը եւ Արմինե Քոսյանը մեր ուսկե մեդալակիրներն են: Ընդ որում, Արմինեն ընդունվել է Երեւանի Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտ, իսկ Սրբուհին այժմ ընտրության առջեւ է կանգնած, նա միաժամանակ 100 տոկոսանոց գրանտով ընդունվել է Վրաստանի Իվ.Ջավախիշվիլու անվան պետական համալսարան եւ՝ Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ, կարծում ենք՝ նա կկատարի ճիշտ ընտրություն:



*ՍՎԵՏԼԱՆԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ*
*Դպրոցի տնօրեն*

## ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԱՎԱՆԻ №1 ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ

Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանի թիվ №1 հանրային դպրոցում մեկնարկում է 2023-2024 ուսումնական տարին: Դպրոցի մանկավարժական աշխատակազմը՝ վաստակաշատ տնօրեն Արտուշ Ուռումյանի ղեկավարությամբ, նոր հաջողություններով, լավագույն սպասումներով ու ձգտումներով է դիմավորում նոր ուսումնական տարին:

Այս տարի դպրոցի 17 շրջանավարտներից 8-ն ընդունվեցին Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու եւ Իլյա Ճավճավաձեի անվան համալսարաններ, նրանցից 4-ը՝ անվճար ուսուցմամբ: Մյուս շրջանավարտների մի մասն ուսումը շարունակում է տարբեր քոլեջներում: Դպրոցի 17 շրջանավարտներին փոխարինելու են գալիս 30 զարմանահրաշ փոքրիկներ, որոնց շնորհիվ կունենանք 2 առաջին դասարան: Սա մեծ ձեռքբերում է:

Կրթօջախի հաջողություններից է նաեւ այն, որ ամռանը, ուսուցչի իրավասության հաստատման քննություններին մասնակցած մեր գրեթե բոլոր ուսուցիչները բարձր ցուցանիշներ են վաստակել առավելագույն կրեդիտ միավորներով:

Շնորհիվ տնօրեն Արտուշ Ուռումյանի բանիմաց ղեկավարության՝ դպրոցն ունի առողջ եւ համերաշխ աշխատանքային կոլեկտիվ: Մեզ ոգեւորում են մեր ուսուցիչների ու մեր աշակերտների հաջողությունները եւ ներշնչում, որ պատրաստ լինենք դիմակայելու ժամանակի ներկայացրած բոլոր մարտահրավերներին: Մաղթում եմ բոլորիս լավատեսություն, նորանոր հաջողություններ ու բացահայտումներ մանկավարժի ստեղծագործ աշխատանքում:



*ՋՈՒԼԻԵՏԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ*
*Դպրոցի փոխտնօրեն*

*Պատրաստեց ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ*

---

**ՆՈՐ ՕՋԱԽ**

# ՓՈՔՐ, ԲԱՅՑ ԹԱՆԿԱՐԺԵՔ

### ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

***Սեպտեմբերի 1-ից Թբիլիսին հարստացավ արվեստի նոր պատկերասրահով: Քաղաքի հենց սրտում, Ազատության հրապարակից 200մ ներքեւ, Պուշկինի փողոցի 6 համարում, բոլորիս հայտնի «Պլանետա» խանութի կողքին կգործի նոր պակերասրահ-խանութ:***



Եվ թող որ, «7մ2» անունը չշփոթեցնի, քանի որ ճիշտ պատկերասրահի չափերից է բխում: Եթե կարճ ձեւակերպենք, փոքր է, փոքր, բայց՝ թանկարժեք, քանի որ փոքրությունն այս պարագայում, բնավ էական չէ, որովհետեւ գլուխգործոցների քանակով իր մեկ քառակուսի մետրում նույնիսկ, պատկերասրահը չի զիջում աշխարհի եւ ոչ մի պակերասրահի:

Հենց բացման օրը ներկայացվեցին ինչպես անցյալի՝ 19-րդ դարի երկրորդ կեսի թիֆլիսցի հանրաճանաչ լուսանկարիչ, ազգագրագետ Դմիտրի Երմակովի (1845-1916), վրաց առաջին պրոֆեսիոնալ լուսանկարիչ Ալեքսանդր Ռոինաշվիլու (1846-1898), մեր ժամանակակիցներ՝ թբիլիսցի Յուրի Մեչիտովի եւ Միխայիլ Նասբերգի լուսանկարչական աշխատանքները: Առանձնահատուկ տեղ հատկացվեց աշխարհահռչակ թբիլիսցի լուսանկարիչ Ալեքսանդր Սաակովի (1937-2007) գլուխգործոցներին, որոնք ոչ այլ ինչ են, քան անցյալ դարի կեսերից վերակենդանացող Թբիլիսին, որն, ավաղ, այդքան արագ անհետացավ մեր կյանքից:

Պատկերասրահի առաջիկա ծրագրերը բովանդակում են բազմաթիվ ցուցահանդեսներ եւ առաջխաղացումներ, որոնք դեռ որ «խիստ գաղտնի է» պահում սրահի հիմնադիր եւ տնօրեն, հավաքորդ Արամ Բաբլոյանը, հետագայում հաճելի անակնկալ դարձնելու նպատակով: Այդուհանդերձ, «Վրաստանի» ընթերցողներին խոստանում ենք, որ հնարավորինս կտեղեկացնենք պատկերասրահի կարեւոր իրադարձությունների մասին՝ համեցեք, վայելեք, ճաշակեք իրական արվեստ...

Մաղթում ենք հարուստ, անխափան ու յուրահատուկ ցուցադրություններ, հավատալով, որ սրահում ներկայացվող արվեստը ոչ միայն մեր մշակութային պատմության գոհարներն է վեր հանելու, այլեւ մշտապես ծառայելու է բարուն ու գեղեցկության սերմանմանը յուրաքանչյուր այցելուի կյանքում:

*ԼԵՎՈՆ ՆԱՆԱՍՅԱՆ*

---

**30 ՏԱՐԻ ԱՆՑ**

# ԵՎ ԿՐԿԻՆ ՀՆՉԵՑ ԳԱՐՐԻ ԴԱՎԹՅԱՆԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՂ «ՏՈՒՆ, ՈՐՏԵՂ ԾՆՎՈՒՄ ԵՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ» ՖԻԼՄԸ

***Սեպտեմբերի 3-ին Վրաստանի ազգային արխիվի կինոսրահում կայացավ Թբիլիսիի Հավլաբարի թաղամասում, Ծուրծումիայի փողոցի 5 համարում գործող «Գարրի Դավթյանի տիկնիկային թատրոնի» 30-ամյակին նվիրված «Տուն, որտեղ ծնվում են հեքիաթները» ֆիլմի ցուցադրությունը:***



Ֆիլմը պատմում է թբիլիսցի հանրաճանաչ տիկնիկագործ Գարրի Դավթյանի (1946-2002) ստեղծագործական կենսուղու, նրա տիկնիկների եւ այդ հեքիաթային աշխարհի ստեղծման մասին: Ժամանակին այն արժանացել է Ինտերնյուսի եւ Մոսկովյան կինոփառատոնի մրցանակներին, ցուցադրվել՝ վրացական առաջատար հեռուստաալիքներով եւ այժմ պահվում է Վրաստանի ազգային կինոարխիվում:

Ֆիլմի հեղինակներն են թբիլիսցի հայտնի կինոռեժիսոր, միջազգային փառատոների դափնեկիր Գարրի Կունցեւը (1943-2004) եւ նրա որդին՝ օպերատոր, միջազգային փառատոների դափնեկիր Վախթանգ Կունցեւ-Գաբաշվիլին:

... Էկրանին 1993 թվականի արխիվային կադրեր են, որոնք հանդիսատեսին են մատուցվել ուղիղ 30 տարի առաջ նույն՝ սեպտեմբերի 3-ին, Գարրի Դավթյանի ծննդյան օրը: Այդ օրը Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի բեմին «Քաջ Նազար» խամաճիկային ներկայացման շատ հետաքրքիր ու հաջողված պրեմիերան էր, սցենարի հեղինակն ու բեմադրիչը թատրոնի ներկայիս գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանն էր: Ներկայացման մասնակիցը Գարրի Դավթյանի տիկնիկներն էին: Ֆիլմի առանցքը այդ իրադարձությունների արխիվային կադրերն են, որոնք նկարահանված են թատրոնի սրահում եւ որոնց շուրջ պտտվում է ողջ պատմությունը:

Ֆիլմի ստեղծման եւ ընդհանրապես, Գարրի Դավթյանի՝ իբրեւ բարության սերմնացանի մասին պատմեց Դավթյանների ընտանիքի նոր սերնդի շարունակողը, թոռնուհին՝ Ալեքսանդրա Դավթյանը:

Ցուցադրմանը ներկա էին հայ ու վրաց մտավորականներ:

*ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ԻՆՉՊԵ՞Ս Է ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԸ




***Արդեն մի քանի տարի է, ինչ Վրաստանի կառավարությունը, համաձայն իր խոստման, ամեն տարի ավելացնում է կենսաթոշակի չափը: Ինչ խոսք, դա ողջունելի է, թեպետ ցանկալի կլիներ իմանալ՝ ինչպե՞ս է սահմանվում այն գումարի չափը, որով ավելացվում է կենսաթոշակը:***

***Ս.ՄԿՐՏՉՅԱՆ***
***Ախալքալաքի***

Ինչպես հայտնի է, Վրաստանի «Պետական կենսաթոշակի մասին» օրենքի համաձայն՝ մինչեւ 70 տարեկան կենսաթոշակառուների կենսաթոշակի ավելացումը (ինդեքսացիան) իրականացվում է վերջին 12-րդ ամսվա արժեզրկման միջին ցուցանիշին համապատասխան, թեպետ առնվազն 20 լարիի չափով, իսկ 70 եւ ավելի տարիքի կենսաթոշակառուների համար՝ հաշվարկի հիմքում դրվում է վերջին 12-րդ ամսվա արժեզրկման ցուցանիշի ու վերջին 6 եռամսյակների ներքին համախառն արտադրանքի՝ իրական ավելացման ցուցանիշի միջին թվաբանականի 80 տոկոսը, առնվազն 25 լարիի չափով:

Ելնելով վիճակագրության ծառայության կողմից հրապարակած արժեզրկման եւ համախառն ներքին արտադրանքի ցուցանիշներից եւ հենվելով զարգացման միտումների վրա, հնարավոր է ենթադրել, որ խորհրդարանին ֆինանսների նախարարության կողմից բյուջեի նախագծի ներկայացման ժամանակ, 12 ամսվա (2022 թվականի հոկտեմբեր-2023 թվականի հոկտեմբեր) արժեզրկման միջին ցուցանիշը կկազմի 4,5 տոկոս, իսկ վերջին 6 եռամսյակների (2022 թվականի 4 եռամսյակներն ու 2023 թվականի առաջին երկու եռամսյակները) ներքին համախառն արտադրանքի աճի ցուցանիշի 80 տոկոսը կկազմի 7,6 տոկոս:

Հետեւաբար, կենսաթոշակի գումարի հնարավոր ավելացումը, մինչեւ 70 տարեկան կենսաթոշակառուների համար, կկազմի 20 լարի (օրենքով սահմանվածի չափով), իսկ 70 եւ ավելի տարիքի կենսաթոշակառուների համար՝ 45 լարի:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ԵՂՈՒՆԳՆԵՐ ԿՐԾԵԼԸ ԻՄՈՒՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈ՞ՒՆ...

***Արդեն քանի տարի է, ինչ չեմ կարողանում երեխաներիս ետ վարժեցնել եղունգ կրծելուց: Ասում են՝ դա ժառանգական է, չգիտեմ... Նաեւ լսել եմ, որ եղունգ կրծելն ունի դրական կողմ, թեպետ, անկեղծ ասած, դրան չեմ հավատում:***



***Գ.ՍԵՐՈԲՅԱՆ***
***Մառնեուլի***

Որքան էլ տարօրինակ լինի, եղունգ կրծելը, իրոք, ունի դրական կողմ: Մասնավորապես, Նոր Զելանդիայում ուսումնասիրել են, թե ինչ օգուտ կարող է բերել եղունգներ կրծելը: Պարզվել է, որ այն երեխաները, որոնք կրծում են եղունգները կամ ծծում են մատը, ավելի հազվադեպ են հիվանդանում ասթմայով, ավելի քիչ են տառապում ալերգիաներով եւ ունեն ավելի ամուր իմունային համակարգ: Գիտնականները դա բացատրում են նրանով, որ եղունգները կամ մատների վրա եղած մանրէները, թափանցելով երեխայի օրգանիզմ, մարզում են իմունային համակարգը՝ տարբեր վարակների ու ալերգիաների նկատմամբ դիմադրողականություն ձեւավորելով: Դա գործում է պատվաստանյութի նման: Իմունային համակարգը հատուկենտ մանրէների վրա փորձ է ձեռք բերում, որը կիրառում է անհրաժեշտ պահին, ավելի ծանր դեպքերում: Ուսումնասիրություններն անցկացվել են 5-10 տարեկան 1000-ից ավելի երեխաների վրա:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

## ՍԵՂՄԱԾ ԲՌՈՒՆՑՔԸ ԱԿՏԻՎԱՑՆՈՒՄ Է ՈՒՂԵՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Սեղմած բռունցքը ակտիվացնում է գլխուղեղի այն հատվածը, որը պատասխանատու է հիշողության համար:

Անցկացված մի գիտափորձի արդյունքում բացահայտվել է այս կապը: Մասնակիցների տարբեր խմբեր փորձել են բառեր մտապահել՝ սեղմելով աջ կամ ձախ բռունցքները: Արդյունքում պարզվել է, որ ամենաշատ բառեր հիշել են նրանք, որոնք մտապահելիս սեղմել են աջ բռունցքը, իսկ հիշելիս՝ ձախ բռունցքը:

Մասնագետների կարծիքով, դա պայմանավորված է գլխուղեղի աշխատանքի հետ: Պատահականորեն ակտիվացել են այն հատվածները, որոնք պատասխանատու են լավագույն հիշողության համար:

ՄԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԸ

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ. ԻՆՉՊԵ՞Ս ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼ ՓՈՔՐԻԿԻՆ

*Առաջին դասարան, նոր միջավայր, դասեր, ընկերներ. նոր ուսումնական տարվա ընդամենը մի քանի օր է մնացել:*

*Հոգեբան Արամ Մանուկյանը՝ «Վրաստանի» հետ զրույցում, առանձնացրեց մի քանի կարեւոր սկզբունք, որոնց հարկավոր է ուշադրություն դարձնել՝ երեխային առաջին անգամ դպրոց ուղարկելիս:*



Հոգեբանը ծնողներին նախեւառաջ խորհուրդ է տալիս համբերատար լինել:

Շատ հաճախ ծնողին թվում է, թե երեխան շատ շուտ պետք է հարմարվի նոր միջավայրին, հեշտ ու արագ ներգրավվի դասապրոցեսին, չունենա խնդիրներ, լավ սովորի, այսինքն՝ ծնողի մոտ սկսում է ձեւավորվել գերազանցիկի սինդրոմ: Սակայն, պետք է համբերատար լինել, քանի որ երեխաների համար միշտ չէ, որ հեշտ է նոր միջավայրին ինտեգրվելը: Ծնողը պետք է իմանա, որ իր երեխան տարբերվում է մնացած երեխաներից եւ ունի իր առանձնահատկությունը: Պետք չէ միանգամից երեխայից պահանջել ավելին: Պարզապես հարկավոր է համբերատարությամբ հետեւել փոքրիկի զարգացմանը:

***Ո՞րն է դպրոց գնալու նպատակը***

Կարեւոր է հասկանալ նաեւ՝ ո՞րն է երեխայի դպրոց գնալու նպատակը: Պետք է գիտակցել, որ երեխան գնում է դպրոց ոչ թե գիտելիք ստանալու, այլ սովորելու, թե ինչպես կարելի է գիտելիք ձեռք բերել: Դպրոց գնալով՝ երեխան սովորում է ինտեգրվել սոցիումին, ձեռք բերել այնպիսի հմտություններ, որոնք կօգնեն կյանքում ավելի հեշտ կողմնորոշվել, խնդիրների լուծման այլընտրանքներ գտնել:

***Խուսափե՛ք ստանդարտ վարքագծից***

Հաճախ ծնողը մտածում է, որ երեխան արդեն առաջին դասարանում պետք է գերազանց սովորի, ունենա պատշաճ վարք, այսինքն՝ ստանդարտ վարքագիծ ձեւավորի: Արդեն այստեղից էլ առաջանում են խնդիրները: Այսօրվա կրթական համակարգն առանց այդ էլ ստանդարտացված է:

Ընդունված կարծիք կա, որ լավ ու խելոք է այն երեխան, որն այնքան էլ ակտիվ չէ, լավ է սովորում, նստում է լուռ եւ չի խանգարում: Բայց կան նաեւ այնպիսի երեխաներ, որոնք աշխույժ են, օժտված են սպորտային ընդունակություններով, շատ լավ վերլուծական միտք ունեն: Այս երեխաները, որոնք փոքր-ինչ տարբերվում են մյուս երեխաներից, հաճախ արժանանում են ծնողի կամ ուսուցչի հանդիմանանքին: Նման մոտեցումն այս պարագայում մեծ հավանականությամբ կթուլացնի երեխայի ակտիվությունն ու սովորելու ձգտումը:

***Մի՛ ծանրաբեռնեք երեխային***

Հաճախ պատահում է՝ առաջին դասարանցիներին տալիս են մեկ էջանոց կամ ավելի երկար արտագրություններ: Պետք չէ ավելորդ ծանրաբեռնել երեխային, այն ուղղակի հակացուցված է այդ տարիքի փոքրիկներին՝ թե՛ հոգեբանական, թե՛ ֆիզիկական առումով: Սա իհարկե կրթական ոլորտի խնդիր է, բայց չի նշանակում, որ ծնողը պետք է լարվի այս ամենից՝ իր լարվածությունը փոխանցելով երեխային: Հարկ է նշել, որ ծնող-երեխա կոնֆլիկտը առաջանում է հենց դպրոց գնալիս, երբ ծնողը երեխային դպրոց ուղարկելիս հիմնվում է իր սեփական ամբիցիաների վրա՝ մոռանալով, որ երեխան իր առանձնահատկություններն ունի:

Երեխային պետք է դասերին տրամադրել աստիճանաբար՝ նախապես թեթեւ առաջադրանքներ տալով: Երեխայի համար դպրոցը պետք է լինի հաճելի եւ ոչ թե՝ բացառապես պարտականությունների կատարման վայր: Հակառակ դեպքում՝ փոքրիկի մոտ կձեւավորվի հակակրանք դեպի դպրոցն ու ուսումը:

Հոգեբանը հորդորում է ծնողներին՝ հետեւել վերոնշյալ խորհուրդներին՝ խուսափելու համար դպրոց-երեխա հարաբերությունների հնարավոր ճգնաժամից:

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

Վրաստանի կառավարությունը հաստատել է 2023-2024 ուսումնական տարվա ուսուցիչների պատրաստման կրթական ծրագրի ֆինանսավորումը:

Ըստ կառավարության ծրագրի՝ 2023-2024 ուստարվա ուսուցիչների վերապատրաստման կրթական ծրագրում ընդգրկված անձանց ֆինանսավորման ծավալն ու չափը հաստատելու մասին որոշմամբ՝ ավելի քան 3 մլն լարի է հատկացվել ուսուցիչների վերապատրաստման կրթական ծրագրում ընդգրկված անձանց կրթության ֆինանսավորման համար:

## Ա Ն Ե Կ Դ Ո Տ Ն Ե Ր

*☺ - Բժիշկ, դուք ինձ ի՞նչ խորհուրդ կտաք:*

*- Զուկ կերեք, դրա մեջ ֆոսֆորը շատ է:*

*- Բայց ես ուզում եմ առողջանալ, այլ ոչ թե գիշերները լույս տալ:*

*☺ Երկու ծերունիներ վիճում են.*

*- Ասում ես, որ ես պառա՞վ եմ: Ինձ բժիշկն ասաց, որ իմ օրգանիզմը աշխատում է ժամացույցի պես:*

*- Դե, նա հաստատ ավազե ժամացույցն է նկատի ունեցել:*

*☺ - Ինչպիսի՞ն է՝ միաժամանակ թռչունի ու խոզի գրիպով հիվանդանալու հավանականությունը:*

*- Զրոյական: Թռչուններն ու խոզերը երբեք իրար հետ ընկերություն չեն անում:*

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



*☞ Կրթությունն ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել՝ աշխարհը փոխելու համար:*

***ՆԵԼՍՈՆ ՄԱՆԴԵԼԱ***

*☞ Հարկավոր են խելացի, կրթված մարդիկ: Մարդկության լավագույն կյանքին մոտենալուն համեմատ, այդ մարդկանց թիվը կմեծանա, մինչեւ որ նրանք կազմեն մեծամասնություն:*

***ԱՆՏՈՆ ՉԵԽՈՎ***

*☞ Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես:*

***ԱԴՈԼՖ ԴԻՍՏԵՐՎԵԳ***

*☞ Որոշ դեղեր ավելի վտանգավոր են, քան հենց ինքը՝ հիվանդությունը:*

***Ա.Բ.***
***«Վրաստանի» ընթերցող***
***Թբիլիսի***

# ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ՝ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՍԽԱԼ ԷՐ»

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը իտալական լրատվամիջոցներին տված հարցազրույցում հայտարարեց, որ անվտանգության ոլորտում Հայաստանի կախվածությունը միայն Ռուսաստանից ռազմավարական սխալ էր:*

Նիկոլ Փաշինյանի խոսքով՝ երկիրը փորձում է դիվերսիֆիկացնել իր անվտանգության քաղաքականությունը:

- Հայաստանի անվտանգության ճարտարապետությունը 99,99 տոկոսով կապված էր Ռուսաստանի հետ, այդ թվում՝ զենք-զինամթերքի գնումը, բայց այսօր, երբ Ռուսաստանն ինքը զենքի ու զինամթերքի կարիք ունի, պարզ է, որ եթե նույնիսկ Ռուսաստանը ցանկանար, չէր կարողանա բավարարել Հայաստանի անվտանգության կարիքները: Այս օրինակը մեզ պետք է ցույց տա, որ անվտանգության ոլորտում միայն մեկ կենտրոնի վրա հույս դնելն ինքնին ռազմավարական սխալ էր: Միայն այն բանից հետո, երբ մենք պոստ ֆակտում զգացինք այս սխալի պտուղները, մենք ջանքեր ենք գործադրում դիվերսիֆիկացնելու մեր քաղաքականությունը անվտանգության ոլորտում,- ասաց Փաշինյանը:

Նրա խոսքով, ռուս գործընկերները հայկական կողմին ասում են, որ արեւմտյան երկրներն աշխատում են Հայաստանի հետ եւ դրդում են Հայաստանի կառավարությանը միջոցներ ձեռնարկել Ռուսաստանին տարածաշրջանից հեռացնելու համար:

- Բայց երբ խոսում ենք մեր ռուս գործընկերների հետ, երբեմն մեր կարծիքն ու գնահատականն ենք հայտնում, որ ամեն ինչ հակառակն է տեղի ունենում, եւ տեսնում ենք, որ Ռուսաստանն ինքը լքում է տարածաշրջանը՝ հաշվի առնելով այն քայլերը, որ անում կամ չի անում Ռուսաստանը: Մենք չգիտենք, թե ինչու է դա տեղի ունենում: Ես կարող եմ մեկնաբանություն անել, բայց չեմ կարող դա ապացուցել,- ընդգծեց Նիկոլ Փաշինյանը:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԵՏ Է ԿԱՆՉԵԼ ԻՐ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԻՑ»

*Հայաստանը հետ է կանչել իր մշտական ներկայացուցչին «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունից»:*

Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջարկով, երեքշաբթի օրը ստորագրել է հրամանագիր՝ կազմակերպությունից հետ կանչելու Հայաստանի մշտական եւ լիազոր ներկայացուցիչ Վիկտոր Բիյագովին:

Մեկ այլ հրամանագրով՝ Հայաստանի նախագահը կառավարության ղեկավարի առաջարկությամբ Վիկտոր Բիյագովին նշանակել է Քիմիական զենքի արգելման կազմակերպությունում Հայաստանի մշտական ներկայացուցիչ: Նախագահի մեկ այլ հրամանագրով՝ Բիյագովը նշանակվել է Նիդեռլանդներում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան:

## 175 ՀԱՅ ԵՎ 85 ԱՄԵՐԻԿԱՑԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Սեպտեմբերի 11-20-ը Հայաստանում կանցկացվեն ԱՄՆ-ի եւ Հայաստանի «ԱՐԾԻՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ-2023» («Artsiv partners 2023») համատեղ զորավարժությունները:*

Ինչպես տեղեկացրել է Հայաստանի պաշտպանության նախարարությունը, զորավարժության նպատակն է՝ բարձրացնել խաղաղապահ առաքելությունների մասնակցող ստորաբաժանման փոխգործակցելիության մակարդակը, իրականացնել կառավարման եւ մարտավարական հաղորդակցման լավագույն փորձի փոխանակում, ինչպես նաեւ՝ բարձրացնել հայկական ստորաբաժանման պատրաստվածությունը ՆԱՏՕ/ ԳՅ «Օպերատիվ կարողությունների հայեցակարգ»-ի պլանային գնահատման համար:

Զորավարժությունները կանցկացվեն «Զարի» ուսումնական կենտրոնի տարածքում:

Նշվում է, որ զորավարժություններին կմասնակցեն ամերիկյան 1-ին բրիգադի, 101-րդ օդադեսանտային դիվիզիայի եւ Կանզասի ազգային գվարդիայի ամերիկացի 85 զինծառայողներ, ինչպես նաեւ հայկական 12-րդ խաղաղապահ բրիգադի 175 զինծառայողներ:

Իր հերթին, ՌԴ նախագահի մամուլի խոսնակ Դմիտրի Պեսկովը նշել է, որ Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ զորավարժությունների անցկացման մասին տեղեկատվությունը մտահոգության տեղիք է տալիս եւ Մոսկվան խորապես կվերլուծի այս լուրերը եւ կհետեւի իրավիճակին:

## ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՐՁԱՆԸ

*Սեպտեմբերի 9-ին, Երեւանի մարզահամերգային համալիրի 40-ամյակի միջոցառումների շրջանակում, համալիրի դիմաց հանդիսավոր արարողությամբ բացվեց հայ ականավոր պետական գործիչ Կարեն Դեմիրճյանի բրոնզաձույլ արձանը, որի քանդակագործը Սարգիս Բաբայանն է, իսկ ճարտարապետը՝ Լեւոն Առաքելյանը:*

Բացման պաշտոնական արարողությանը ներկա էին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, նախագահ Վահագն Խաչատուրյանը, Ազգային ժուղովի նախագահ Ալեն Սիմոնյանը, Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը, Կարեն Դեմիրճյանի երկու որդիները՝ Սամվել եւ Ստեփան Դեմիրճյանները:

Նշենք, որ Հայաստանի կառավարությունը Կարեն Դեմիրճյանի արձանը մարզահամերգային համալիրի տարածքում տեղադրելու որոշումը կայացրել էր դեռ 2019 թվականին:



Կարեն Դեմիրճյանը եղել է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար, նորանկախ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ:

### ՍԱՄՎԵԼ ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆԸ՝ ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՀ



*Սեպտեմբերի 9-ին Արցախի նախագահի ընտրելու հարցով հրավիրվեց Արցախի Հանրապետության Ազգային ժողովի հատուկ նիստ: Փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել է 23 պատգամավոր, որոնցից 22-ը քվեարկել է կողմ, իսկ 1-ը՝ դեմ: Քվեարկության արդյունքում ԱՀ Աժ-ը որոշել է Սամվել Սերգեյի Շահրամանյանին ընտրել Արցախի նախագահ: Հանրապետության նորընտիր նախագահի երդմնակալության արարողությունը տեղի կունենա սեպտեմբերի 10-ին՝ Աժ հատուկ նիստի ժամանակ:*

### ԱՆԱՅԾԵԳՐԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

*Հայաստանն ու Արաբական Միացյալ Էմիրությունները ստորագրել են վիզային ռեժիմի վերացման համաձայնագիր:*

*Այն ստորագրվել է Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի՝ Արաբական Միացյալ Էմիրություններ կատարած պաշտոնական այցի շրջանակներում:*

### ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՁՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ՝ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ

*Ծաղկաձորի լեռնադահուկային կենտրոնում կգործարկվի արհեստական ձյան առաջին համակարգը:*

*Հայաստանի օլիմպիական կոմիտեի ֆեյսբուքյան էջը տեղեկացնում է, որ վերոհիշյալ համակարգը կգործարկվի աշխարհահռչակ «Sherpa» ընկերության հետ համագործակցության արդյունքում:*

### ՄԱՀԱՑԵԼ Է ԱԼԲԵՐՏ ԱԶԱՐՅԱՆԸ



*Սեպտեմբերի 5-ին, 94 տարեկանում մահացել է լեգենդար մարմնամարզիկ, Օլիմպիական խաղերի եռակի, աշխարհի, Ասիական խաղերի, Եվրոպայի չեմպիոն, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ (1954), ՀԽՍՀ վաստակավոր մարզիչ, ՀԽՍՀ ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործիչ (1967) Ալբերտ Ազարյանը:*

*Սեպտեմբերի 8-ին հոգեհանգստի արարողությունը անցկացվեց Երեւանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում, վերջին հրաժեշտը՝ սեպտեմբերի 9-ին, Կոնդի Սուրբ Հովհաննես Կարապետ եկեղեցում, ապա՝ Ալբերտ Ազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցում:*

*Ալբերտ Ազարյանի աճյունը ամփոփվեց Երեւանի Կոմիտասի անվան պանթեոնում:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՎՐԱՑԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ



*Հայաստանի հանրակրթական դպրոցներում, տարածաշրջանային լեզուների ուսուցման ծրագրի շրջանակում, Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հաստատվել են վրացերենի ուսուցման առարկայական ծրագրերը՝ 8-րդ եւ 11-րդ դասարանների համար:*

Ավելի վաղ՝ ԿԳՄՍ նախարարի հրամաններով հաստատվել էին նաեւ պարսկերենի, վրացերենի, թուրքերենի եւ ադրբեջաներենի առարկայական ծրագրերը, այս ուսումնական տարում գործընթացը շարունակելու համար անհրաժեշտություն կար հաստատելու միայն վրացերենի 8-րդ եւ 11-րդ դասարանների ծրագրերը:

Տարածաշրջանային լեզուների առարկայական ծրագրերը մշակելու համար ԿԳՄՍ նախարարությունը համագործակցել է համապատասխան մասնագետների եւ Երեւանի պետական համալսարանի հետ: Մշակված ծրագրերը սահմանված կարգով երաշխավորվել են դպրոցներում գործածության համար:

Տարածաշրջանային լեզուների ուսուցումն իրականացվում է 2022-2023 ուսումնական տարվանից՝ որպես երրորդ օտար լեզու կամ առարկայական խմբակ:

Հիշեցնենք՝ մասնագիտական քննարկումների արդյունքում որոշում է կայացվել ադրբեջաներենի եւ թուրքերենի ուսուցումը կազմակերպել բացառապես 10-12-րդ դասարանների սովորողների համար, իսկ վրացերենի եւ պարսկերենի ուսուցումը՝ միջին դպրոցի դասարաններից սկսած:

2022-2023 ուսումնական տարում տարածաշրջանային լեզուների ուսուցման ծրագիրն իրականացվել է Հայաստանի 33 հանրակրթական ուսումնական հաստատություններում, որոնցից 13-ում՝ պարսկերեն, 3-ում՝ վրացերեն, 13-ում՝ թուրքերեն, 4-ում՝ ադրբեջաներեն:

Վերոնշյալ հաստատությունների մի մասում տարածաշրջանային լեզուների ուսուցումն իրականացվում է խմբակի ձեւաչափով, որոշներում՝ 3-րդ օտար լեզվի:

Համապատասխան մասնագետ ունենալու դեպքում ուսումնական հաստատություններն ազատ են տարածաշրջանային լեզուների ուսուցումը ԿԳՄՍ նախարարի հրամաններով հաստատված ծրագրերով կազմակերպելու հարցում, որի մեկնարկի մասին անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել ԿԳՄՍ նախարարությանը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՄՅՈՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

### ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ՝ ԳՐԱՆՑՎԵՔ ...

*Սիրելի հայրենակիցներ, 2023թ. հոկտեմբերի 1-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ, տեղի կունենա Մյուռոնօրհնության արարողություն, որին իրենց մասնակցությունը կբերեն Քույր Եկեղեցիների եւ միջեկեղեցական կառույցների ներկայացուցիչներ, Հայ Եկեղեցու նվիրապետական աթոռներից ու աշխարհասփյուռ թեմերից բարձրաստիճան հոգեւոր հայրեր եւ հավատացյալ ուխտավորներ:*

Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի օրհնությամբ եւ նախաձեռնությամբ, կիրականացվի վիրահայ հավատացյալների ուխտագնացությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ ի մասնակցություն Սրբազան արարողությանը:

Թբիլիսիից ուղեւորությունը կմեկնարկի հոկտեմբերի 1-ին, վաղ արեւածագին եւ կավարտվի նույն օրը վերադարձով:

Ցանկացողները, մինչեւ սեպտեմբերի 25-ը ներառյալ, պետք է գրանցվեն Սբ. Գեւորգ առաջնորդանիստ կամ Սբ. Էջմիածին եկեղեցում, մոմավաճառի մոտ: Մեկնելու եւ ետ վերադարձի ճանապարհածախսը կազմում է 80 (ութսուն) լարի: Մեկնումը՝ հոկտեմբերի 1-ին, վաղ առավոտյան, Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցու հարակից տարածքից: Երթուղային մեքենաների մեկնարկի ժամանակը լրացուցիչ կտեղեկացվի:

ՖՈՒՏԲՈԼ

## ՎՐԱՍՏԱՆ-ԻՍՊԱՆԻԱ 1:7. ՉՆԱՅԱԾ ՊԱՐՏՈՒԹՅԱՆԸ, ԵԶՐԱՓԱԿԻՉԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Է

| A ԹԻՄԵՐ | Խ | Հ | Ո | Պ | Մ |
|---|---|---|---|---|---|
| Շոտլանդիա | 5 | 5 | 0 | 0 | 15 |
| Իսպանիա | 3 | 2 | 0 | 1 | 6 |
| Նորվեգիա | 4 | 1 | 1 | 2 | 4 |
| **Վրաստան** | 4 | 1 | 1 | 2 | 4 |
| Կիպրոս | 4 | 0 | 0 | 4 | 0 |

Եվրոպայի առաջնության որակավորման փուլում «A» խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականը սեփական հարկի տակ խոշոր հաշվով զիջեց Իսպանիայի հավաքականին: Առաջին անգամ Վրաստանի հավաքականի պատմության մեջ թիմը պարտվեց ջախջախիչ՝ 1:7 հաշվով:

Ներկա դրությամբ Վրաստանի թիմը 4 միավորով խմբում զբաղեցնում է 4-րդ տեղը: Խմբի աղյուսակը գլխավորում է Շոտլանդիայի հավաքականը (5 խաղից՝ 15 միավոր): Հաջորդ հանդիպումը Վրաստանի հավաքականը սեպտեմբերի 12-ին կանցկացնի մրցակցի դաշտում՝ Նորվեգիայի հավաքականի դեմ:

## ԹՈՒՐՔԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ 1:1. ՀԱՂԹԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ՈՉ-ՈՔԻ ՄՐՑԱԿՑԻ ԴԱՇՏՈՒՄ

| D ԹԻՄԵՐ | Խ | Հ | Ո | Պ | Մ |
|---|---|---|---|---|---|
| Թուրքիա | 5 | 3 | 1 | 1 | 10 |
| **Հայաստան** | 4 | 2 | 1 | 1 | 7 |
| Խորվաթիա | 3 | 2 | 1 | 0 | 7 |
| Ուելս | 4 | 1 | 1 | 2 | 4 |
| Լատվիա | 4 | 0 | 0 | 4 | 0 |

Եվրոպական առաջնության որակավորման «D» խմբում հանդես եկող Հայաստանի հավաքականը խմբային չորրորդ հանդիպումն անցկացրեց Թուրքիայում, Ստամբուլից 300 կմ հեռավորությամբ՝ Էնի Էսկիշեխիրում: Խմբի առաջատարի հետ մենամարտում հայ ֆուտբոլիստները հանդիպման վերջին րոպեներին ձեռքից բաց թողեցին հաղթանակը՝ հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի-1:1:

Ներկա դրությամբ Հայաստանի թիմը 7 միավորով Խորվաթիայի հետ զբաղեցնում է աղյուսակի 2-3 տեղերը: Իսկ առաջատարը 10 միավորով Թուրքիայի հավաքականն է:

Սեպտեմբերի 11-ին Երեւանում կկայանա Հայաստան-Խորվաթիա հանդիպումը:



Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի կոլեկտիվը եւ «Վրաստան» թերթի խմբագրակազմը իրենց խոր վշտակցությունն են հայտնում դպրոցի ուսմասվար Ալմարի Սուքիասյան-Սիրադեղյանին եւ խմբագրության համակարգչային ծրագրավորող Տիգրան Սիրադեղյանին՝ դստեր ու քրոջ ամուսնու՝

*Գարիկ Վանիկի ԱՎԱԼՅԱՆԻ*

ողբերգական մահվան կապակցությամբ եւ ցավակցում են հանգուցյալի ընտանիքի անդամներին, հարազատներին ու մերձավորներին:

## ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱԲԱՋՅԱՆ



Կարճատեւ, բայց ծանր հիվանդությունից հետո, 65 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց նախկին՝ Ա.Ս.Պուշկինի (այժմ՝ Իլիայի համալսարան) անվան պետական մանկավարժական ինստիտուտի Հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի դասախոս ՄԱՐԳԱՐԻՏԱ ԺԻՐԱՅՐԻ ԱԲԱՋՅԱՆԸ:

Ավարտելով Թբիլիսիի թիվ 40 միջնակարգ դպրոցը, Մարգարիտան ընդունվում է վերոհիշյալ ինստիտուտի բանասիրական ֆակուլտետ՝ Հայոց լեզու, գրականություն, վրաց լեզու գրականություն մասնագիտությամբ: Գերազանց գնահատականներով ավարտելով ԲՈՒՀ-ը, Աբաջյանն ինստիտուտի ռեկտորի հրամանով սկսում է աշխատել նույն հաստատության Հայոց լեզվի եւ գրականության ամբիոնում որպես լաբորանտ, հետո՝ դասախոս: Չափից դուրս բարեխիղճ, պարտքի պատասխանատվության բարձր զգացում, բանիմաց, բարի, ընկերասեր եւ էլի շատ ու շատ դրական հատկանիշներով օժտված դասախոսը հարգված ու սիրված էր թե' կոլեկտիվի եւ թե' ուսանողների կողմից: Ընտանեկան խնդիրների պատճառով Աբաջյանին չհաջողվեց ավարտին հասցնել թեկնածուական թեզը՝ հայ-վրաց փոխհարաբերությունների վերաբերյալ, բայց դա խոչընդոտ չհանդիսացավ նրա՝ իբրեւ դասախոսի, աշխատանքը բարձր գնահատելու համար եւ պատահական չէր, որ 2001 թվականին Աբաջյանը արժանացել է Պատվո մեդալի:

Մարգարիտա Աբաջյանը միշտ սիրով կհիշվի իր գործընկերների եւ հարյուրավոր ուսանողների կողմից:

*ՄԻ ԽՈՒՄԲ ԸՆԿԵՐՆԵՐ*

## ԽԱՉԲԱՌ




***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Նախագահության անդամ, ստորոգյալի լրացում: 5.Հանրահայտ դերասան, վաստակավոր արտիստ ... Մարության: 9.Հայ մեծ գրող, «Ռուզան» դրամայի հեղինակը: 10.Իրազեկ, իմացող: 12.Թույլ, հազիվ նշմարվող: 13.Շրջապատել, չորս կողմից շրջապատման մեջ առնել: 17.Միատեսակ առարկաներից ամեն մեկը: 18.Թաքուն հետեւել: 20.Համադասական շաղկապ: 23.Սրտի «շարժիչը»: 25.«Իմ փոքրիկ ..., Կհասնե՞ս, արդյոք, ծովին կապուտակ» (ժող. երգ): 27.Անգլիացի հանճարեղ ֆիզիկոս, մաթեմատիկոս ... Նյուտոն: 29.«... ու խան իս ինձ ամա» (Սայաթ-Նովա): 32.Գնդակը դարպասում: 33.Երեսի մաս: 34.Ծլել, մեծանալ: 37.Պարթեւաց Որոդեք Երկրորդ թագավորի որդին եւ գահակիցը: 39.Գեղեցիկ թռչուն: 42.Դերձակի գործը: 44.Ե'վ գյուղ Հայաստանում, ե'ւ հայկական գինի: 45.Լերկ, անաջի, բուսազուրկ: 46.Քաղաք ՌԴ-ում: 48.Հոր կամ մոր մայրը թոռան համար: 50....նար, եկե...: 52.Գալիք ժամանակը: 53.Տարվա եղանակ: 54.«... ու լուռ, մենակ կերթաս, ի՞նչ ասեմ» (Գուսան Շահեն): 55.Վրաց գրող Ն.Դումբաձեի գրական հերոս:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Դեպք, միջադեպ: 2.Տարեկան, տարիք: 3.Ներկի տեսակ: 5.Մեխիկոյի բնիկները: 6....ֆֆի, ...բունի: 7.«Արի, մի գնա, եկել ես, ...» (Լուսիկ Քոշյանի երգացանկից): 8.«Շարվեշարան եկան, անցան ...ը» (Ավ.Իսահակյան): 11.Եգիպտացի քրիստոնյա: 17.Մայ..., հայ..., քույ...: 15.Լավ ու վատ լուր տվող: 16.Վարսահարդարի գործիքներից: 19.Վրաց հայտնի դերասանուհի ... Աբաշիձե: 21.Բարձր, լայնարձակ սենյակ հանդիսությունների համար: 22.Պեպոյի ընկերը: 24.Կինոյի եւ թատրոնի հայ հանճարեղ դերասանուհի: 25.Նար-Դոսի օպերային երգիչ որդին: 26.Կինոյի եւ թատրոնի վրացի խորհրդային դերասան ... Գոձիաշվիլի: 27.Հին հույն գրող Հոմերոսի ստեղծագործություններից: 28.Օժանդակ բայ: 30.Երկրի ամենաչոր անապատը: 31.Խոջիվանքում թաղված մեծ վիպասանը: 32.Երկրաչափական մարմին: 33.«Առէջների մեջ քնած բզեզին աշխարհը ճոճք էր թվում, հոտավետ ...» (Ա.Բակունց): 35.Դեղ ու ...: 36.Անցած օրը: 38.Ներկա է, գոյություն ունի: 40.Պետքական, անհրաժեշտ: 41.Մատի զարդ: 43.Ոդիսեւսի հայրը: 47.Ստամբուլում հրատարակվող հայկական պարբերական: 49.Ժխտական նախածանց: 51.Աշակերտ, սովորող:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Մաքսիմում: 8.Ողողել: 9.Ճամփեզր: 10.Մասամբ: 14.Գրվանքա: 18.Զազրելի: 20.Վարսանդ: 22.Քիթ: 23.Ժան: 24.Ուգրո: 29.Սերտ: 31.Աֆրիկացի: 33.Դեմք: 35.Բառ: 37.Պատահար: 39.Ելամ: 40.Նեղ: 41.Մետր: 42.Նիֆ: 45.Մոնղոլ: 48.Ճեմուղի: 51.Շաքի: 52.Արար: 53.Ծպտյալ: 54.Մուտանտ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Անճար: 3.Սամբա: 4.Մթերք: 5.Մորմ: 6.Կոմս: 7.Ջերմ: 11.Անզոր: 12.Ալեք: 13.Բլիթ: 14.Գովք: 15.Վարժ: 16.Նշան: 17.Ազդու: 19.Լիտր: 21.Սարիթաղ: 25.Գրիմ: 26.Ոստ: 27.Աֆղան: 28.Բադամ: 30.Տառ: 32.Ցերեկ: 34.Քերծե: 35.Բանդուրա: 36.Ամի: 38.Տերն: 43.Ֆլիրտ: 44.Բոշա: 46.Ոսպ: 47.Լալ: 48.Ճիմ: 49.Մատ: 50.Ղան:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445